ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/77

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Գեո-Նալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Սահակյանի (լիազորագիր՝ տրված 18.10.2021թ.),

քննելով «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Գեոդեզիական գործիքների և GPS-ռովեր տեղորոշման համակարգ»-ի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Գեո-Նալ» ՍՊԸ-ի կողմից 13.10.2021թ. ներկայացված (14.10.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/77 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Գեո-Նալ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գեո-Նալ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 13.10.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները - «23» սեպտեմբերի 2021թ. հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/05 ծածկագրով գնանշման մրցույթը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել Փ. Բուզանդի 1/3 հասցեում, «11» հոկտեմբեր 2021թ -ին ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Քաղաքաշինություն» ՓԲԸ կարիքների համար՝ «Գեոդեզիական գործիքների և GPS-ռովեր տեղորոշման համակարգի» ձեռքբերման (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «1,2,3,4,5» չափաբաժիններում՝

Չափաբաժինների համարները	***Չափաբաժնի անվանումը***
1	GPS/ ռեֆերենց կայան/
2	Տախեոմետր
3	Դիստոմետր
4	GPS-բազային և ռովեր կայան արտաքին ռադիոմոդեմով
5	Գրասենյակային ծարագրային ապահովում

Պավիրատուն «26» փետրվար 2021թ. հրապարակում է 2021թ համար նախատեսված գնումների պլան, որում մինչև ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/05 ծածկագրով մրցույթի հրապարակվելը փոփոխություններ չեն լինում: Ըստ վերոհիշյալ գնումների պլանի ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/05 ծածկագրով մրցույթում առկա չափաբաժիններից երեքը ներառված չեն:

Ըստ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 4 մասի 16 կետի համաձայն /16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում/, պատվիրատուն ուղղակիորեն հակասում է գնման գործընթացի կազմակերպման իրավական դրույթներին:

Մեկ այլ կետով արդեն առկա չափաբաժներում կատարվել է քանակային փոփոխություններ:

Բողոքի պահանջը - Հաշվի առնելով ներկայացված խախտումները՝ «Գեռ-Նալ» ՍՊԸ-ն խնդրում է «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/05 ծածկագրով գնանշման մրցույթը անվավեր համարել և նոր մրցույթ հայտարարել՝ համաձայն ՀՀ օրենսդրության»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.10.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումն և հիմնավորումները.

«Քաղաքաշինություն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 21.10.2021թ. թիվ 20-210 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 14.10.2021թ. /ԲՔԱ-ԳՆ/1116885-21 գրության հայտնում ենք, որ «Քաղաքաշինություն» ՓԲ ընկերության կողմից հաստատված 26.02.2021թ գնումների պլանում նախատեսվել է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/01 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնվելիք ապրանքները քիչ քանակով, նախատեսվել է ձեռք բերել ընկերության միջոցների հաշվին, որը չի գնվել:

Հետագայում, ընկերության կարիքների համար անհրաժեշտ է եղել ձեռք բերել մյուս չափաբաժինների գործիքները, որի հիման վրա կազմվել է 20.09.2021թ. փոփոխված գնման պլանը, սակայն չի հրապարակվել: Քանի որ ֆինանսական միջոցներ դեռ նախատեսված չեն գնումների պլանում, գնման առարկաները ներառվել են առանց ընդհանուր գների նշման և գնման ընթացակարգը կազմակերպվել է գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.10.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/77 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/77 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար «Գեոդեզիական գործիքների և GPS-ռովեր տեղորոշման համակարգ»-ի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են 01.10.2021թ.:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Գեո-Նալ» ՍՊԸ-ի 13.10.2021թ. ներկայացված բողոքը, «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի 21.10.2021թ. թիվ 20-210 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով *www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է***:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***գնումների պլանը***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***պարտադիր հրապարակում է տեղեկագրում***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի**

հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ <u>գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը</u> սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

ԳԲՔԱ-ՆԳ-2021/77 բողոքի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 14.10.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/16885-2021 գրությամբ դիմել է «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին՝ խնդրելով տրամադրել «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 21.10.2021թ. թիվ 20-210 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 14.10.2021թ. /ԲՔԱ-ԳՆ/1116885-21 գրության հայտնում ենք, որ «Քաղաքաշինություն» ՓԲ ընկերության կողմից հաստատված 26.02.2021թ գնումների պլանում նախատեսվել է ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/01 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնվելիք ապրանքները քիչ քանակով, նախատեսվել է ձեռք բերել ընկերության միջոցների հաշվին, որը չի գնվել:

Հետագայում, ***ընկերության կարիքների համար անհրաժեշտ է եղել ձեռք բերել մյուս չափաբաժինների գործիքները, որի հիման վրա կազմվել է 20.09.2021թ. փոփոխված գնման պլանը, սակայն <u>չի հրապարակվել</u>***: Քանի որ ֆինանսական միջոցներ դեռ նախատեսված չեն գնումների պլանում, գնման առարկաները ներառվել են առանց ընդհանուր գների նշման և գնման ընթացակարգը կազմակերպվել է գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա»:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործով առկա նյութերը և այն համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, արձանագրում եմ հետևյալը.

Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է, որը Օրենքով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք), մինչդեռ արձանագրում եմ, որ «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգն առանց իրավական հիմքի, այն է՝ առկա չէ սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլան: Արդյունքում Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները, ուստի գտնում եմ, որ բողոքը սույն մասով հիմնավոր է, և Ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած:

Ինչ վերաբերում է բողոքաբերի բողոքով ներկայացված հետևյալ պահանջին. «Նոր մրցույթ հայտարարել ՀՀ օրենսդրության համաձայն», ապա արձանագրում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ Պատվիրատուի կարիքին համապատասխան գնում կատարելու նպատակով ընթացակարգ հայտարարելը վերապահված է Պատվիրատուին, հետևաբար գտնում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը տվյալ դեպքում իրավասու չէ սույն որոշման շրջանակներում պարտավորեցնել Պատվիրատուին հայտարարել նոր ընթացակարգ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Գեո-Նալ» ՍՊԸ-ի կողմից 13.10.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1.Պարտավորեցնել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել Ընթացակարգը:

2. Բողոքի պահանջը մնացած մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**